



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 24_L

21 մարտի 2022 թվական

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 18_L ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԵՎ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5)-րդ և 6)-րդ ենթակետերով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5)-րդ և 6)-րդ ենթակետերով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 18-L որոշմամբ հաստատված կառուցվածքում և հաստիքացուցակում լրացումներն ու փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն հանդիսանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 18_L որոշման անբաժանելի մասը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, բացառությամբ «Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ստորաբաժանման կրտսեր գիտաշխատողի և ճարտարագետի կրճատվող հաստիքների, ինչպես նաև «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոն» ստորաբաժանման գիտական ղեկավարի պաշտոնի փոփոխության, որոնք ուժի մեջ են մտնում ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտի հաջորդ օրվանից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022թ. մարտ «21»

Երևան